ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-6/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

08.11.2019թ.
Ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ պետ Հ.Մելիքյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ իրային, ՎՔՆ, կուլտուր կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ.Ուստյանը,
- ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության ՀՀ և արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում կադրերի պատրաստման բաժնի ավագ սպա, մայոր Տ.Հունանյանը,
- ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության գլխավոր մասնագետ Վ.Իրիցյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-6/1» ծածկագրով հրատապ մեկ անձ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-6/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-6/1» ծածկագրով հրատապ մեկ անձ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ.Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-6/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ԱՏԱ» ՍՊԸ
2	«Արկածախնդիր» ՍՊԸ
3	«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ
4	«ՎԱՆԵ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-6/1» ծածկագրով հրատապ մեկ անձ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Մ.Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-6/1» ծածկագրով հրատապ մեկ անձ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքի.

ՎԱՆԵ ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի Հավելված 2-ը /գնային առաջարկ/ հաստատվել է ՎԱՆԵ ՍՊԸ-ի տնօրենի կողմից սակայն նշվել է. «Ուսումնասիրելով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1 ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, ԱՏԱ ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով», ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4) ենթակետը **/հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան/** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ՎԱՆԵ ՍՊԸ-ի հայտը մերժել:

2.4 «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հայտում ներառված փաստաթղթերում՝ ներառյալ գնային առաջարկում, բոլոր այն հատվածներում որտեղ նշված է ընթացակարգի տեսակը՝ **հրատապ մեկ անձ** ընթացակարգի փոխարեն նշվել է **գնանշման հարցման** ընթացակարգ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված փաստաթղթերում ընթացակարգի ծածկագիրը ճիշտ է նշված և այն նույնականացվում է ընթացակարգի ծածկագրի հետ, հետևաբար ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պայմաններին /պահանջներին/ համապատասխանող:

ԱՏԱ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ում /մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ չի նշվել մասնակցի անվանումը և տնօրենի անուն, ազգանունը:

Քանի որ ԱՏԱ ՍՊԸ-ի հայտի հավելված 1-ի /դիմում-հայտարարություն/ 2) կետով նշված է, որ մասնակիցը կից ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /հավելված1.1/, գնահատող հանձնաժողովը հավելված 1.1-ը նույնականացնում է հավելված 1-ի հետ, հետևաբար ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ԱՏԱ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պայմաններին /պահանջներին/ համապատասխանող:

«Արկածախնդիր» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Մ.Ամիրյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (դրամ)	Մասնակցի անվանումը	Մասնակցի առաջարկած գինը		
				Գին՝ առանց ԱԱՀ	ԱԱՀ	Գին՝ ներառյալ ԱԱՀ
1	Դրոշներ / ռազմական համալսարանի զինանշանով սեղանի դրոշ մետաղական ձողով/	40000	«Արկածախնդիր» ՍՊԸ	60000	0	60000
2	Հուշանվերներ /ռազմական համալսարանի զինանշանով փայտյա տուփ՝ գինիով/	369600	«Արկածախնդիր» ՍՊԸ	480000	0	480000
			«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ	355200	0	355200
			«ԱՏԱ» ՍՊԸ	360000	0	360000
3	Դրոշներ / ռազմական համալսարանի զինանշանով դրոշ՝ ձողով/	60000	«Արկածախնդիր» ՍՊԸ	117000	0	117000
4	Ծաղիկներ	12000	«Արկածախնդիր» ՍՊԸ	15000	0	15000
5	Մեդալներ, կրծքանշաններ	100000	«Արկածախնդիր» ՍՊԸ	100000	0	100000
			«ԱՏԱ» ՍՊԸ	108000	0	108000
6	Հուշանվերներ /ռազմական համալսարանի ապակյա զինանշան՝ տուփով/	1350000	«Արկածախնդիր» ՍՊԸ	1350000	0	1350000
			«ԱՏԱ» ՍՊԸ	800000	0	800000
7	Դրոշներ /ռազմական համալսարանի զինանշանով առանց ձողի/	120000	«Արկածախնդիր» ՍՊԸ	144000	0	144000
8	Դրոշներ /ՀՀ պետական դրոշ ձողով/	60000	«Արկածախնդիր» ՍՊԸ	108000	0	108000
9	Դրոշներ /ռազմական համալսարանի զինանշանով, պատվանդանով և ձողով/	74000	«Արկածախնդիր» ՍՊԸ	74000	0	74000

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 11.11.2019թ. հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի և սույն ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները՝ ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով որպես հայտ ներկայացրած միակ

մասնակից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1, 3, 4, 7, 8-րդ չափաբաժինների համար «Արկածախնդիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գները գերազանցում են տվյալ չափաբաժինների համար նախատեսված ֆինանսական միջոցները, հետևաբար գնահատող հանձնաժողովը որոշեց **14.11.2019թ. ժամը 12:30-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) **«Արկածախնդիր» ՍՊԸ-ի հետ** կազմակերպել **բանակցություններ**, իսկ գնումների համակարգողը նույն օրը ծանուցեց **«Արկածախնդիր»** ՍՊԸ-ին կազմակերպվելիք բանակցությունների վերաբերյալ:

14.11.2019թ. «Արկածախնդիր» ՍՊԸ-ն չներկայացավ բանակցություններին, հետևաբար բանակցությունների ժամկետի ավարտին մասնակցի կողմից ներկայացված գները մնացին անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1» ծածկագրով հրատապ մեկ անձ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ.Ամիրյան)

4.1 15.11.2019թ. հիմք ընդունելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1» ծածկագրով հրատապ մեկ անձ ընթացակարգի հանձնաժողովի կողմից էլեկտրոնային գնահատման արդյունքները ներկայացված գնային (ընդհանուր) առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ ճանաչվեցին՝ 2-րդ չափաբաժնի մասով **«Շուշան Տեխնիկս»** ՍՊԸ-ն, 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով՝ **«Արկածախնդիր»** ՍՊԸ-ն իսկ 6-րդ չափաբաժնի մասով ԱՏԱ ՍՊԸ-ն: Մյուս **մասնակիցները** հայտարարվեցին հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետը /ոչ մի հայտ չի համապատասխանում հրավերի պահանջներին/ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1» ծածկագրով հրատապ **մեկ անձ** ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց սույն ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ.Ամիրյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան ՀՀ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվությունը հանձնաժողովի կողմից ուսումնասիրվելու վերջնաժամկետի օրը ժամը 17:20-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) _____ Հ.Մելիքյան

Գնահատող _____ Գ.Ուտյան

Գնահատող _____ Տ.Հունանյան

Գնահատող _____ Վ.Իրիցյան

Գնումները համակարգող _____ Մ.Ամիրյան